ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 N-Ի 1535-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

31/01/2022 - 15/02/2022

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 10 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 10 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

1 կողմ

0 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

17/02/2022

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 Ն-Ի 1535-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 9. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մշտադիտարկման և գնահատման նպատակով կիրառման ենթակա տվյալներն օգտագործվում և (կամ) տրամադրվում են վիճակագրական և հետազոտական նպատակներով օգտագործելու համար՝ պահպանելով անձնական տվյալների գաղտնիության պահպանման՝ օրենքով սահմանված պահանջները:»: Առաջարկում ենք նաև անձնական տվյալների	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	

		գաղտնիության պահպանմամբ՝ հրապարակել մշտադիտարկման զեկույցը՝ հանրային վերահսկողություն իրականացնելու նպատակով:		
2	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 8. 25-րդ կետով, համաձայն որի՝ Ծառայությունն էլեկտրոնային համակարգի միջոցով հետևում է ԾԱԾ-ով երաշխավորված միջոցառումների իրականացմանը և ծառայությունների մատուցմանը, առաջարկում ենք սահմանել, որ հասարակական կազմակերպությունները՝ անձի դիմումի հիման վրա կարող են կատարել ԾԱԾ-ի մշտադիտարկումը և խորհրդատվական եզրակացություն տալ Ծառայությանը:	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	
3	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 7. 21-րդ կետով նախատեսված է, որ ԾԱԾ-ի իրագործման ընթացքի վերաբերյալ մշտադիտարկումն իրականացվում է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ծառայության կողմից: Առաջարկում ենք մշտադիտարկման աշխատանքներին մասնակից դարձնել մասնագիտացված	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	

		քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: Առաջարկում ենք մշտադիտարկումն իրականացնող խմբի կազմը հաստատել աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով՝ ապահովելով նախարարության և Ծառայության, ինչպես նաև ՔՀԿ-ների մասնակցությունը: Այն դեպքում, երբ սույն առաջարկի ընդունումը նպատակահարմար չի դիտարկվի, մշտադիտարկման աշխատանքներին ապահովել ՔՀԿ-ների մասնակցությունը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:		
4	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 6. 18-րդ կետով նախատեսված «կարող են կատարվել» բառերը փոխարինել «կատարվում են» բառերով:	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	
5	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 5. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ԾԱԾ-ի հետ համատեղ՝ գնահատվող անձին տրամադրվում է ամբողջական և	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ	

		բազմակողմանի տեղեկություն ԾԱԾ-ում ներառված միջոցառումներն իրականացնող կազմակերպությունների և (կամ) մարմինների և (կամ) հաստատությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով ծառայությունների քարտեզը:»:	և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	
6	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 4. 11-րդ կետից հետո լրացնել նոր՝ 12-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ" «12. ԾԱԾ-ը կազմելիս առավելագույնս հաշվի է առնվում հաշմանդամություն ունեցող անձի համար ընդունելի լինելու հանգամանքը, ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը:» Առաջարկը ընդունելուց հետո անհրաժեշտ է վերանայել հաջորդիվ համարակալումները:	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	
7	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 3. 7-րդ կետով նախատեսված է, որ ԾԱԾ-ի թղթային կրիչը մեկ օրինակից տպվում, ստորագրվում և տրամադրվում է գնահատվող անձին կամ նրա ներկայացուցչին (...): Անհասկանալի է, թե ո՞վ է ներկայացուցիչը: Առաջարկում ենք հստակեցնել: Նաև նախատեսել, որ այն	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	

		դեպքում, երբ անձը 16 տարեկանից բարձր է, փաստաթղթերը պետք է տրամադրել նաև իրեն:		
8	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 2. 7-րդ կետի առաջին նախադասությունը՝ «Էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ)», լիարժեք չէ: Առաջարկում ենք վերանայել:	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	
9	Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիա 15.02.2022 14:41:32	* Առաջարկ/ները հիմնված են Նախագծի՝ e-draft.am կայքում տեղադրված word տարբերակի վրա: 1. Հստակեցնել իրավական ակտի կառուցվածքը, մասնավորապես առանձին բաժիններով առանձնացնել ԾԱԾ-ը կազմելու հետ կապված նորմերը, իրականացման, մշտադիտարկման և վերահսկողությանը կարգը:	Հաշվի առնելով, որ առաջարկներում տրված հղումները նախագծի կետերի հետ ունեն անհամապատասխանություն, դրանք լրացուցիչ քննարկվել են առաջարկ ներկայացնողների հետ և աշխատանքային կարգով համաձայնեցվել:	
10	Հանուն երեխայի ներդաշնակ զարգացման նախաձեռնություն 13.02.2022 19:23:52	«Միավորելով ջանքերը հանուն երեխային հոգեխոսքային և ֆիզիկական ներդաշնակ զարգացման» բազմամասնագիտական նախաձեռնող խումբը ողջունելի է համարում անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրումը ՀՀ-ում և պատրաստակամություն է հայտնում	Ներկայացված առաջարկությունների 1-ին կետն ընդունվել է: 2-րդ կետն ընդունվել է մասամբ: 3-րդ կետն ընդունվել է մասամբ, խմբագրվել են 13-րդ և 14-րդ կետերը: 4-րդ կետը չի ընդունվել: Նախագծի համաձայն,	

		նպաստելու այդ գործընթացներին: Ստորև ներկայացնում ենք մեր առաջարկությունները և դիտարկումները սույն նախագծի վերաբերյալ" 1. Նախագծի հավելվածի 1) 6-րդ կետում «խթանելու» բառից հետո ավելացնել «անկախ կյանքի իրավունքն իրացնելու» բառերը 2) 9-րդ կետում «սահմանելու» բառից հետո « , երեխաների դեպքում՝ հինգ տարի ժամկետով կամ մինչև 18 տարին լրանալու» բառերը 3) 13-րդ կետում «վերագնահատում» բառից առաջ ավելացնել «կրկնակի գնահատման և» բառերը, իսկ «ժամանակ» բառից հետո ավելացնել «նաև անձի դիմելիության դեպքում» բառերը 4)15-րդ կետը հստակեցնելու կարիք ունի, քանի որ պարզ չէ թե ով է գնահատում ԾԱԾ-ով երաշխավորված միջոցառումները արդյունավետությունը՝, գնահատված անձը, գնահատող հանձնաժողովը, թե միջոցառումն իրականացնող կազմակերպությանը:	անձի ֆունկցիոնալության գնահատում կատարելու իրավասությունը վերապահված է ՄՄԾ-ին, իսկ ԾԱԾ_ի մշակումը ֆունկցիոնալության գնահատման փուլերից է, որի ձևաչափը կներառի նաև արդյունավետության գնահատման վերաբերյալ բաժին (ԾԱԾ-ի ձևաչափը հաստատվելու է նախարարի հրամանով):	